# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 փետրվարի 2023 թվականի N 206-Ա

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿՈՒՂՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀայաստանիՀ անրապետությանօ րենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N731-Ն, 05.01.2022թ. N 13-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության նկուղով ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲԾՏ» ՓԲ ընկերության կողմից տրված թիվ 0-50 տեղեկանքը՝

***որոշում եմ.***

1.Ալավերդի քաղաքի Բաղրամյան թաղամասի թիվ 8 շենքի հյուսիսային մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 43.6 քմ արտաքին մակերեսով (38.6 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության նկուղով ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:

2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Բաղրամյան թաղամասի թիվ 8 շենքի հյուսիսային մասում գտնվող, 1992 թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2023F3EAYR ծածկագրով հաշվառված, 43.6 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության նկուղով ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00244 հա մակերեսով հողամասով:

3. Ալավերդի քաղաքի Բաղրամյան թաղամասի թիվ 8 շենքի հյուսիսային մասում գտնվող բնակելի նշանակության նկուղով ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Բաղրամյան թաղամաս, 90 ավտոտնակ փոստային հասցե:

4.Ավտոտնակի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար

6.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմին ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Վահե Ավետիքյանին օրինականացված նկուղով ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. փետրվարի 15
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2023 թվականի N 207-Ա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀայաստանիՀանրապետությանօրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 39-րդ, 60-րդ հոդվածներով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արսեն Հրաչիկի Ասրյանի դիմումը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, նվիրատվության պայմանագիրը, սեփականության իրավունքի N 1104877 վկայականը,

***որոշում եմ՝***

1.Վերականգնել Արսեն Հրաչիկի Ասրյանին (ծնված՝01.05.1979թ.), նվիրատվության պայմանագրով պատկանող ներքոհիշյալ գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ հողհատկացման հիմքերը, համասեփականության իրավունքը.

1.1 06-112-0478-0016 ծածկագրի տակ գտնվող 0.16186 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. փետրվարի 15
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 208-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով,

հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 25.11.2022թ N 95-Ա, 11.01.2023թ N 9-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 15022023-06-0022 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Վռամ Գարուշի Բարխուդարյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները

*որոշում եմ՝*

1.Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Խուդյակով փողոց, 103 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 25.11.2022թ N 95-Ա, 11.01.2023թ N 9-Ա որոշումներով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 26.7 քմ արտաքին մակերեսով (21.3 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 37967 (երեսունյոթ հազար ինն հարյուր վաթսունյոթ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.002468 հա մակերեսով հողամասը՝ 46342 (քառասունվեց հազար երեք հարյուր քառասուներկու) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Վռամ Գարուշի Բարխուդարյանին:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 209-Ա

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03.02.2023Թ. N 128-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով,

**որոշում եմ՝**

1. Ալավերդի համայնքի ղեկավարի 03.02.2023թ. «Սեփական հողամասում ինքնակամ կառուցված բաց պատշգամբով սրճարանն օրինականացնելու մասին» N 128-Ա որոշման մեջ 4-րդ կետից հետո լրացնել. «Հողամասի սահմանները և տեղադիրքը հաստատված է համայնքի ղեկավարի կողմից հաստատված և որակավորում ունեցող չափագրող կազմակերպության կողմից տրված հատակագծերի համաձայն: Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը հաստատված է, որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս»: Վերը նշված գույքի մասով կադաստրային գործում առկա նախկին Շնող համայնքի ղեկավարի որոշումները և գրությունները ճանաչել անվավեր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. փետրվարի 16
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 210-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով,

հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 22.08.2022թ N 292-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 15022023-06-0013 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Պարգև Արամայիսի Հակոբյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները՝

***որոշում եմ.***

1.Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 3 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 22.08.2022թ N 292-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 44.0 քմ արտաքին մակերեսով (33.4 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 45232 (քառասունհինգ հազար երկու հարյուր երեսուներկու) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.0044 հա մակերեսով հողամասը՝ 34848 (երեսունչորս հազար ութ հարյուր քառասունութ) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Պարգև Արամայիսի Հակոբյանին:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. փետրվարի 16
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2023 թվականի N 211-Ա

## *ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ, 33.1 կետերով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի տունը, անասնաշենքը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Սիրվարդ Ալբերտի Աբգարյանի դիմումը, հողամասի սեփականության իրավունքի N 11032016-06-0041 վկայականը, «SU-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից կազմված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, Աքորի գյուղի վարչական ղեկավարի 26.01.2023թ N165 տեղեկանքը,

**որոշում եմ՝**

1.Համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, 1 փողոց, 44 հողամաս հասցեում գտնվող, Սիրվարդ Ալբերտի Աբգարյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.25 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում 2017թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 20239K3FXS ծածկագրով հաշվառված, 343.0 քմ արտաքին մակերեսով (302.9 քմ ներքին մակերեսով) բնակելի տունը, 25.0 քմ արտաքին մակերեսով (23 քմ ներքին մակերեսով) անասնաշենքը:

2.Օրինականացված բնակելի տան, անանաշենքի համար սահմանված ընդհանուր՝ 312892 (երեք հարյուր տասներկու հազար ութ հարյուր իննսուներկու) դրամ արժեքով վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

4.Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 212 -Ա

***06-002-0151-0047 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Արամայիս Ժորայի Զավարյանի դիմումը, սեփականության իրավունքի N 2275100 վկայականը, ժառանգության իրավունքի վկայականը,*

***որոշում եմ՝***

*1.Կադաստրային քարտեզի 06-002-0151-0047 ծածկագրի/ թիվ 2275100 վկայական/*
*հողամասին և հողամասում առկա ավտոտնակին տրամադրել Ալավերդի համայնք, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամասի Գ.Օսիպյան փողոց, 4 ավտոտնակ փոստային հասցեն:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. փետրվարի 16
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

17 փետրվարի 2023 թվականի N 213-Ա

### *06-112-0007-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Ասանեթ Անդրանիկի Ղազարյանի դիմումը, ժառանգության իրավունքի վկայականը, սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 1196471 վկայականը,*

***որոշում եմ.***

*1.Ասանեթ Անդրանիկի Ղազարյանին ժառանգության իրավունքով պատկանող՝ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Օձուն գյուղում գտնվող, կադաստրային քարտեզի 06-112-0007-0032 ծածկագրով 0,077 հա տնամերձ հողամասին և հողամասում առկա բնակելի տանը տրամադրել՝ ՀՀ, Լոռու մարզ, համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 11-րդ փողոց, 42 փոստային հասցեն:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. փետրվարի 17
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

17 փետրվարի 2023 թվականի N 214-Ա

## *ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 01.12.2022Թ. N 104-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ինմասի 1-ին կետով,

**որոշում եմ՝**

1.Ալավերդի համայնքի ղեկավարի 01.12.2022թ. «Համայնքային սեփականություն ճանաչված, օրինականացված ամառային խոհանոցը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 104-Ա որոշման մեջ «20794 (քսան հազար յոթ հարյուր իննսունչորս)» բառերի փոխարեն կարդալ «35568 (երեսունհինգ հազար հինգ հարյուր վաթսունութ) բառերը»:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. փետրվարի 17
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2023 թվականի N 215-Ա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀայաստանիՀանրապետությանօրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 39-րդ, 60-րդ հոդվածներով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով,

հիմք ընդունելով Միեր Մարգարի Սարգսյանի դիմումը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերիի հատակագիծը, ժառանգության իրավունքի վկայագիրը, Լոռու մարզի Արևածագ գյուղի տնտեսական գրքից հողային բարեփոխումների և սեփականության տեղական հանձնաժողովի որոշումից քաղվածքները ,

***որոշում եմ.***

1.Վերականգնել Միեր Մարգարի Սարգսյանին(ծնված՝18.10.1953թ.) ժառանգության իրավունքով պատկանող ներքոհիշյալ գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ հողհատկացման հիմքերը, համասեփականության իրավունքը.

1.1 06-020-0119-0132 ծածկագրի տակ գտնվող 0.120646 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

1.2.06-020-0114-0039 ծածկագրի տակ գտնվող 0.101315 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

1.3.06-020-0110-0026 ծածկագրի տակ գտնվող 0.32013 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

1.4.06-020-0103-0048 ծածկագրի տակ գտնվող 0.36374 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

17 փետրվարի 2023 թվականի N 216-Ա

### *ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15.02.2023Թ. N 205-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002թ. N 88 որոշումով,

**որոշում եմ՝**

Ալավերդի համայնքի ղեկավարի 15.02.2023թ. «Ավտոտնակի զբաղեցրած հողամաս ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 205-Ա որոշման լրացնել. «Ավտոտնակի գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակելի տուն համաձայն 24/10/2019թ N 31 և երկարաձգված 22.10.2021 թ. N 28 շինթույլտվությունների, հաստատված նախագծի և 06.10.2022թ. N 13 ավարտական ակտի:»

«Գործառնական նշանակություն փոփոխությունն իրականացնել առանց նոր ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման քանի որ նոր փոփոխություն չի նախատեսվում, իսկ իրականացված փոփոխությունների համար տրամադրված են օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթեր»:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. փետրվարի 17
ք. Ալավերդի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2023 թվականի N 217-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂՊԱՏ ԳՅՈՒՂԻ 19/14 ՀԱՍՑԵՈՒՄ «ԴԱՆԻԱՐ ԳՐՈՒՊ » ՍՊԸ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ,12-րդ և 15-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի « ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ, ԻՍԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ՝ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 27-Ն որոշման,

հիմք ընդունելով Հաղպատ գյուղի «Դանիար Գրուպ» ՍՊԸ- ի տնօրեն Նունե Նալբանդյանի 10.01.2023թ. դիմումը.

**որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի 19/14 հասցեում գտնվող «Դանիար Գրուպ » ՍՊԸ- ին տրամադրել ոգելից և արկոհոլային խմիչքի վաճառքի համար թիվ 126 թույլտվությունը:

2.ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով «Դանիար Գրուպ » ՍՊԸ- ից գանձել տեղական տուրք 22000 (քսաներկու հազար ) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2023 թվականի N 218-Ա

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ 9 ՓՈՂՈՑ ԹԻՎ 41 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՁ ՍԱՄՎԵԼ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ,12-րդ և 15-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի « ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ, ԻՍԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ՝ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 27-Ն որոշման,

հիմք ընդունելով Այգեհատ գյուղի ԱՁ Սամվել Շահվերդյանի 09.02.2023թ. դիմումը.

***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Այգեհատ գյուղի 9 փողոց թիվ 41 հասցեում գտնվող ԱՁ Սամվել Շահվերդյանին տրամադրել ոգելից և արկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի համար թիվ 127-128 թույլտվությունը:

2. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով ԱՁ Սամվել Շահվերդյանից գանձել տեղական տուրք 20000 ( քսան հազար ) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2023 թվականի N 219-Ա

***06-003-0015-0002 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ 0.03573 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 1-ինև 2-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Սահակ Սեփխանյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 1323583 վկայականը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, Ախթալա քաղաքի վարչական ղեկավարի կողմից 06.02.2023թ. տրված 318 N տեղեկանքը,

***որոշում եմ.***

1.Սահակ Սեփխանյանին սեփականության իրավունքով պատկանող, Ախթալա քաղաքի Օրջոնոկիձե փողոց, N 11/1 հասցեում գտնվող բնակելի տանը, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ախթալա, Օրջոնոկիձե փողոց, 36 տուն, փոստային հասցեն:

2.Վերականգնել Սահակ Սեփխանյանին սեփականության իրավունքով պատկանող, Ախթալա քաղաքի Օրջոնոկիձե փողոց, 36 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 06-003-0015-0002) բնակելի տան զբաղեցրած 0.03573 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:

3. Օրինականացնել համայնք Ալավերդի, քաղաք Ախթալա, Օրջոնոկիձե փողոց, 36 տուն հասցեում գտնվող, սեփականության իրավունքով պատկանող, 0.03573 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 2005 թվականին կառուցված, կադաստրի կոմիտեում 2023NAWYE9 ծածկագրով հաշվառված, 61.5 քմ արտաքին մակերեսով (48.5 քմ ներքին մակերեսով) բաց պատշգամբով բնակելի տունը:

4.Օրինականացված բաց պատշգամբով բնակելի տան համարհամար սահմանված 53751 (հիսուներեք հազար յոթհարյուր հիսունմեկ) դրամ վճարը սահմանված 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

6.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

7.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. փետրվարի 17
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2023 թվականի N 220-Ա

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 02.02. 2002թ. N 88 որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 26-րդ կետով,

հիմք ընդունելով Արման Արարատի Հովհաննիսյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 06042012-06-0088 վկայականի պատճենը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը,

***որոշում եմ՝***

1.Արման Արարատի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 1/4 շենքի 29 բնակարան հասցեում գտնվող բնակարանում կատարված ձևափոխությունները՝ 2 հատ դռան, 2 հատ պատուհանի, 5 հատ միջնորմի քանդումը, 1 հատ դռան բացումը համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 26-րդ կետի ճանաչել օրինական:

2.Օրինականացված ձևափոխությունների՝ քանդված՝ դռների, պատուհանի, միջնորմների համար սահմանված վճարներն ընդհանուր՝ 10280 (տասհազար երկու հարյուր ութսուն) դրամ գումարի չափով, սահմանված ժ

3.Փոփոխել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 1/4 շենքի 29 բնակարան հասցեում գտնվող, Արման Արարատի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող, 41.8 քմ մակերեսով բնակարանի գործառնական նշանակությունը և այն հաշվառել հասարակական նշանակության՝ որպես խանութ օգտագործելու:

4.Շինության գործառնական նշանակությունը փոփոխված է առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, քանի որ կատարված շինարարական աշխատանքները, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Նորոշման, դասակարգվում են շինարարական ցածր ռիսկայնության աստիճանի (գտնվում են շինարարական աշխատանքների ռիսկայնության առաջին գոտում), ուստի, միջնորմների փոփոխությունների արդյունքում կատարված ձևափոխությունները շինարարության թույլտվություն չեն պահանջում:

5.Նշված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

2023թ. փետրվարի 17
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2023 թվականի N 221-Ա

### *ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բաց պատշգամբով բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը,

հիմք ընդունելով Գայանե Ֆելիքսի Ալեքսանյանի դիմումը, համասեփականության իրավունքի N1051164 վկայականը, «ՏՍ-ՌԻԷԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցների հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինությունների հատակագծերը՝

***որոշում եմ.***

1.Օրինականացնել համայնքի Ալավերդի, գյուղ Օձուն գյուղ Ամոջ հասցեում գտնվող՝ Ֆելիքս Համայակի Ալեքսանյանին (ծնված՝ 20.11.1948թ.), Գայանե Ֆելիքսի Ալեքսանյանին (ծնված՝ 02.10.1979թ.), Սոֆիկ Ֆելիքի Ալեքսանյանին (ծնված՝ 08.03.1988թ.), Մարգարիտ Տիգրանի Սահակյանին (ծնված՝ 03.02.1948թ.), համասեփականության իրավունքով պատկանող, 0.12564 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 2020թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2023RCHFRY ծածկագրով հաշվառված, 16.1 քմ արտաքին մակերեսով (14.1 քմ ներքին մակերեսով) բաց պատշգամբով բնակելի տունը:

2.Օրինականացված բաց պատշգամբով բնակելի տան համար սահմանված՝ 14071 (տասնչորսհազար յոթանասունմեկ) դրամ արժեքով վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3.Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

4.Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԹԱՄԱՁՅԱՆ**

2023թ. փետրվարի 17
ք. Ալավերդի